



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

N 409-Ա/2

31.03.2020 թ.

**«ԴԱՍԱՐԱՆ + ԴԱՍԱԿԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԱՌՑԱՆՑ ՁԵՎԱԶԱՓՈՎ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Դասարան+դասական» մշակութային կրթության ստեղծագործական նախագծի առցանց ձևաչափով իրականացման նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել «Դասարան+դասական» մշակութային կրթության ստեղծագործական նախագծի առցանց ձևաչափով իրականացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005.Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 14352.0 հազար (տասնչորս միլիոն երեք հարյուր հիսուներկու հազար) դրամ՝ 2020

թվականին «Դասարան+դասական» մշակութային կրթության ստեղծագործական նախագծի առցանց ձևաչափով ծախսերն իրականացնելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության ժամանակակից արվեստի և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազմման և ստորագրման գործառույթները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Իսգանյանին:

ՆԱԽԱՐԱՐ

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Դասարան + դասական» մշակութային կրթության ստեղծագործական նախագծի (առցանց ձևաչափով)

1	Կազմակերպության անվանում	«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Գ. Լուսավորիչի 6
3	Ծրագրի անվանում	«Դասարան+դասական» մշակութային կրթության ստեղծագործական նախագծի առցանց ձևաչափով իրականացման:
3.1	Բովանդակություն	<p>Վերջին երկու տասնամյակների ընթացքում թատրոն երևույթը, որպես հասարակության մտածողության և զգացմունքների կարգավորման հաստատություն, այլընտրանքային կրթություն, իրեն վերապահված գործառույթներն իրականացնելու լուրջ խնդիր ունի հասարակական կյանքում: Ավելին. թատրոն, ներկայացում, դերասան, դրամատուրգ և այլ բառերն անգամ հասարակության որոշ շերտերի ընկալման մեջ կորցրել են իրենց իսկական նշանակությունը: Հայ դասական թատրոնն իր հարուստ պատմությամբ և ձեռքբերումներով, չինացող արժեքներով էական ազդեցություն չունի ժամանակակից հայ երիտասարդների կյանքում: Այս ծրագրի նպատակն է ժամանակի տված հնարավորություններով և միջոցներով դարոցականներին փոխանցել ամբողջական և խորքային պատկերացում թատրոն երևույթի մասին, որը մեծապես դրական ազդեցություն է ունենալու ապագա քաղաքացիների ձևավորման գործում:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում ստեղծված նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակի կանխարգելմամբ պայմանավորված, առաջարկում ենք ծրագիրն իրականացնել առցանց տարբերակով (դասախոսությունները հասանելի կլինեն ԴԱՍԱՐԱՆ+ԴԱՍԱԿԱՆ-ի ֆեյսբուքյան էջով), երկու</p>

ամիս տևողությամբ, շաբաթական երեք անգամ՝ հետևյալ ենթաբաժիններով.

➤ «Թատերագիտակ»

Նկարահանվում են թատերարվեստի վերաբերյալ տարբեր թեմաներով դասախոսություններ, որոնք ներառելու են նաև վիզուալ նյութեր:: Դրանից հետո աշակերտները կարող են հարցեր ուղղել, և հաջորդ դասախոսությունների ընթացքում մասնագետները կպատասխանեն հարցերին:

➤ «Ետնաբեմ»

Նկարահանվում և հեռարձակում է տեղեկատվական հաղորդաշար, որը ներկայացնելու է հանդիսականին անհասանելի թատերական միջավայրերը՝ ետնաբեմ, արհեստանոցներ, գրիմանոցներ և այլն: Յուրաքանչյուր հատվածի պատասխանատու մասնագետը կներկայացնի թատրոնի գործունեությանն առնչվող համապատասխան բաժինը:

➤ «Ներկայացում առցանցում»

Հեռարձակվում են տարբեր ժամանակահատվածներում նկարահանված 8 թ ներկայացումներ՝ նախապես կազմակերպվում են քննարկումներ տվյալ ներկայացման բեմադրիչների, կամ այլ մասնագետի մասնակցությամբ:

➤ «Թատերական թանգարան»

Դրվագներ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի 100-ամյա պատմությունից՝ թանգարանային առարկաների և արխիվային փաստաթղթերի ընդգրկմամբ:

➤ «Զրույց արտիստի հետ»

Այս հատվածում թատրոնի տնօրեն, արվեստագիտության թեկնածու Վ.Մկրտչյանը հյուրընկալում է անվանի դերասաններին, քննարկում նրանց մասնակցությամբ ներկայացումներ, դերակատարումներ, թատերական հարցեր:

Առավել ակտիվ մասնակիցներին կտրամադրվի Գ. Սունդուկյանի անվ. թատրոն մինչև թատերաշրջանի ավարտ անվճարմուտք գործելու արտոնություն:

3.2	Նպատակ	<p>Այս ծրագրի նպատակներն են՝</p> <p>Ա) Վերարժեվորել թատերարվեստի դերը հասարակական կյանքում, նոր սերնդի մեջ բացահայտել առավել օժտվածներին և նրանց ունակությունների զարգացման և ինքնադրսևորման համար ստեղծել պայմաններ:</p> <p>Բ) Նպաստել արվեստի որևէ տեսակի առավել հիմնավորված ընտրությանը՝ իբրև ապագա մասնագիտություն, ոլորտի բնականոն սերնդափոխության համար հիմքեր ստեղծել:</p> <p>Գ) Համարձակ որոնումներ կատարել կրթություն-թատերարվեստ փոխհարաբերության մեջ, նպաստել առավել գրավիչ, նոր եղանակներ բացահայտելու գործին:</p> <p>Առաջարկվող ծրագիրը թե՛ գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության նոր համակարգի կիրառմամբ, թե՛ մշակութային կրթության ապակենտրոնացման նոր ձևաչափի կիրառման, թե՛ շատ այլ հարցերով համապատասխանում է Նախարարության որդեգրած մշակութային քաղաքականությանը:</p>
3.3	Անցկացման ժամկետ	27.03.2020 - 22.05.2020
3.4	Անցկացման վայր	«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
3.5	Ակնկալվող արդյունքներ	<p>Մեծ ընկալումով ծրագրից ակնկալվող արդյունքները բաժանվում են երկու մասի՝ կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունքներ:</p> <p>Կարճաժամկետ արդյունքը կլինի նոր ներուժի բացահայտումը, իսկ երկարաժամկետը՝ այդ ներուժը որպես առավել խորը և առաջադեմ սերնդափոխության հիմք դարձնելը:</p>
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	24 հեռարձակում, 24 000 առցանցային դիտում: